

ըլայ գրչագրաց յիշատակարաններ իր ձեռքէն,  
որոնք իր կենսագրութիւնը կրնան լուսաւորել,  
ըլայ նորանոր տաղեր, որոնք իր մտաց կորովու-  
թիւնն աւելի կրնան բարձրացընել:

\* \* \*

Յ. Յետագայ հրատարակութեան ժամանակ  
երկու Չեռագիր գլխաւորաբար ունէինք աչաց  
առջեւ: Առաջին 5 տաղերու համար բնագիր առած  
ենք Մատենագարանիս Թ. 684 Չեռագիրն: Կա-  
րելոր Չեռագրիս նկարագրութիւնն կու տանք  
հոս համառօտիւ:

Թուղթք՝ 83: — Մեծութիւն՝  $11 \times 8$   
սմ.: — Գրութիւն միասին  $7 \times 5$  սմ.: —  
Տողք՝ 17: — Թերթք՝ այժմ Ա — Ը: — Նիւթ՝  
թուղթ հաստ եւ ողորկեալ, դեղնագոյն: —  
Կազմ՝ հին կաշեկազմ: — Հանգամանք՝ լաւ-  
եզերքներն կան այլ եւ այլ ձաբուտօքներ,  
պատուած ինկած են այժմ այլ եւ այլ թղթեր  
(Գ. թերթէն 2. Գ. թերթէն 4. Ե. թերթէն  
4. Զ. թերթէն 1 եւ Ը. թերթէն 2. Թղ. 25  
կիսով պատուած է: — Գիր՝ բոլորգիր  
փոքր, հաստ եւ կանոնաւոր: — Զարդագիրք՝  
գրեթէ ամէն ոտանաւորի սկիզբը: — Խորա-  
գիրք՝ սեւագեղ եւ մանր բոլորգիր. անատառք  
կարմրագիր: Լուսանցքն բաժնուած է ներսէն  
երկու նեղ եւ դրսէն երկու լայն կարմրագծե-  
րով: — Ժամանակ՝ ԺՁ գար, յետ 1540  
տարւոյ: — Գրիչ եւ ծաղկող՝ ապահովապէս